

**ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

**2014Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ՀԱՍՏԱՏՄԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարությունը պատասխանատու է <<Արցախբանկ>> ՓԲԸ 2014թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական վիճակը, գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և սեփական կապիտալում փոփոխությունները ճշմարիտ ներկայացման, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:


Ղեկավարությունը պատասխանատու է՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և խորհրդի կողմից հաստատման և դրա հետևողական կիրառման համար,
- հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության և համեմատականության համար,
- Բանկի գործունեության անընդհատության գնահատման համար,
- հաշվապահական գրանցումներ վարելու համար ,որոնք բավարար են Բանկի գործառնությունները արտացոլելու և ողջամիտ ճշգրտությամբ Բանկի ֆինանսական վիճակը բացահայտելու համար,
- ՀՀ օրենսդրությանը և հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառման վարման համար,
- Բանկի ներքին հսկողության արդյունավետ համակարգի մշակման, ներդրման և պահպանման համար,
- Բանկի ակտիվների պահպանության, խարդախությունների և այլ անճշտությունների բացահայտման ու կանխման համար:

  
Արթուր Մխիթարյան

Գործադիր տնօրեն – Վարչության նախագահ  
30 մարտի 2015թ



  
Ռուզան Խաչատրյան  
Գլխավոր հաշվապահ